ՆԱԽԱԳԻԾ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-Ի ԵՎ «ԱՌԳՈ-ՖԱՐՄ», «ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ», «ԷՍԿՈՒԼԱՊ», «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ», «ՖԱՐՄԴՈՄ», «ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ ՌԵՄԵԴԻ» ՍՊԸ-ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՆՐԱԳՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ «ԳՈՐԾՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ (ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 416-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ)» ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 123. 1-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հանրագրերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝ 2023 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ ԱԺ Նախագահի կողմից ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով հասցեագրված կոլեկտիվ հանրագրի (Այսուհետ՝ հանրագիր)՝ «Գործող կարգավորումների կատարելագործման (ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածում փոփոխություն կատարելու)» վերաբերյալ, ներկայացնում ենք հետևյալ եզրակացությունը.

Հանրագրի շրջանակներում, դեղատնային գործունեություն իրականացնող յոթ ընկերությունների կողմից առաջարկվում է վերանայել՝ փոփոխել ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով սահմանված գործող իրավակարգավորումները, մասնավորապես՝

1. ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածում առաջարկվում է բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաների փոխարեն նշել **բացառապես տվյալ օբյեկտում** առկա հսկիչ դրամարկղային մեքենայի՝ նախորդ եռամսյակում արձանագրած շրջանառության մասին, ինչպես նաև, սահմանել պատասխանատվության չափի անհատականացման իրավական մեխանիզմներ: Առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Հոդված 416. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելը

Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նշված դեպքի) խախտման համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 200 հազար դրամի և տվյալ հարկ վճարողի ***տվյալ հասցեում*** բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության ***մինչև*** 0.5 տոկոսի հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան 10 միլիոն դրամը:

Պատասխանատվության չափը որոշելիս հարկային մարմինը հաշվի է առնում արարքի ծանրությունը, հանրային վտանգավորության աստիճանը, խախտում կատարած անձի մեղքի աստիճանը և այլ էական հանգամանքներ»:

2. Առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման համար պատասխանատվության ենթարկել նաև անհատապես այն ֆիզիկական անձին, ով չի գրանցել վաճառվող ապրանքը հսկիչ դրամարկղային մեքենաներով:

3. Առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքի առավելագույն չափը (մինչև 10.000.000 ՀՀ դրամ) էականորեն նվազեցնել:

ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը ուսումնասիրել է «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ի և մի շարք այլ կազմակերպությունների կողմից հանրագրով վերը ներկայացված առաջարկությունների հիմնավորվածության հարցերը և դրանք համարել ոչ նպատակահարմար, ելնելով հետևյալ նկատառումներից.

Վերջին տարիներին ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության շրջանակներում իրականացվող հարկային վարչարարության բարեփոխումները հիմնականում միտված են փաստաթղթաշրջանառության կարգավորման հիմնախնդրի լուծմանն ու ստվերային տնտեսության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների ներդրմանը: ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը 2022 թվականի ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-103-Ն օրենքի ընդունման ժամանակ առաջնորդվել է փաստաթղթաշրջանառության կարգավորման խնդրի լուծման առաջնահերթությամբ և պետության հանդեպ հարկային պարտավորությունների կատարման առումով ընտրված կարգավորման մեխանիզմների (իրավախախտման դեպքում նախատեսված պատասխանատվության միջոցի չափի) կանխարգելիչ բնույթի ապահովման ու վերահսկողության ուժեղացման նկատառումներով:

Հանրագրով ներկայացված՝ ՀԴՄ կիրառության կանոնների խախտման համար սահմանված տուգանքի չափի վերանայման առաջարկի հինավորվածության վերաբերյալ հարկ է նշել, որ 2022 թվականի ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-103-Ն օրենքի ընդունման արդյունքում սահմանվել է ՀԴՄ կիրառության կանոնների խախտման համար կիրառվող տուգանքի մեկ միասնական մեծություն (200 հազար դրամի և տվյալ հարկ վճարողի բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.5 տոկոսի գումարի հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան 10 միլիոն դրամը)՝ անկախ տարվա ընթացքում կատարված խախտման դեպքերի քանակից և գործունեության ոլորտից: Ընդ որում, մինչև օրենքի ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված է եղել տուգանքի նշանակման նվազագույն շեմ, իսկ տուգանքի առավելագույն շեմի սահմանափակում առկա չի եղել: Ինչ վերաբերում է տուգանքի առավելագույն չափի սահմանման հիմնավորվածության հարցին, ապա ըստ վերը նշված օրենքի ընդունման ժամանակ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված հաշվարկների՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտի համար (տարեկան 24 մլն դրամ շրջանառության դեպքում) տուգանքի առավելագույն չափը կազմում է 230.000 դրամ (նախորդ եռամսյակի 6.0 մլն. դրամ շրջանառության դեպքում), շրջանառության հարկ վճարողի համար (տարեկան 115 մլն դրամ

շրջանառության դեպքում)՝ 343.750 դրամ (նախորդ եռամսյակի 28.75 մլն. դրամ շրջանառության դեպքում): Հետևաբար, առավելագույնը՝ 10 մլն դրամի չափով տուգանքը կիրառելի կլինի, եթե հարկ վճարողի շրջանառությունը նախորդ եռամսյակում կազմի 1.96 մլրդ դրամ և ավելի:

Միևնույն ժամանակ, ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով սահմանված տուգանքների մեծությունները սահմանելիս հաշվի է առնվել այն, որ որևէ արարքի համար պատասխանատվության միջոցի սահմանումը պետք է ունենա կանխարգելիչ բնույթ, ապահովելով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված՝ պատասխանատվության համաչափության սկզբունքի պահպանումը, ընդ որում, նախատեսվող պատասխանատվությունը որքան համաչափ լինի իրավախախտման ծանրությանը, այնքան արդյունավետ կլինի դրա կանխարգելիչ նշանակությունը: Ինչ վերաբերում է հանրագրով ներկայացված՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածում բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաների փոխարեն **բացառապես տվյալ օբյեկտում** առկա հսկիչ դրամարկղային մեքենայի նախորդ եռամսյակում արձանագրած շրջանառության մասը նշելու առաջարկին, ապա հարկ ենք համարում նշել, որ նույնիսկ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ներառված կազմակերպությունների մոտ, որպես կանոն, եզակի կլինեն այնպիսի կազմակերպություններ, որոնց 1 օբյեկտում ՀԴՄ-ով ձևակերպված եռամսյակային ֆիսկալ հասույթները կգերազանցեն վերոնշյալ շրջանառության չափը, ուստի՝ միայն խախտման օբյեկտում առկա ՀԴՄ-ով ձևակերպված եռամսյակային ֆիսկալ հասույթների ընդունման առաջարկը համարում ենք ոչ բավարար չափով հիմնավորված:

Հաշվի առնելով վերը ներկայացված փաստարկները, գտնում ենք, որ ՀԴՄ կիրառության կանոնների խախտման համար հանրագրով առաջարկվող տուգանքի չափի վերանայման՝ փոփոխության առաջարկի ընդունումը նպատակահարմար չէ:

Հանրագրով ներկայացված 2-րդ առաջարկի, այն է՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման համար վաճառվող ապրանքը հսկիչ դրամարկղային մեքենաներով չգրանցած ֆիզիկական անձին պատասխանատվության ենթարկելու հնարավորության առաջարկի վերաբերյալ, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով: Նույն

հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկային իրավախախտման համար հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային պատասխանատվության են ենթարկվում բացառապես օրենսգրքով և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

Այսպիսով, ՀՀ հարկային օրենսգրքի իրավաարգավորումների համաձայն՝ հարկային իրավախախտման սուբյեկտ է համարվում հարկ վճարողը (քննարկվող դեպքում իրավաբանական անձը), այլ ոչ թե վերջինիս աշխատակից համարվող այն ֆիզիկական անձը, ով չի գրանցել վաճառվող ապրանքը հսկիչ դրամարկղային մեքենայով:

Ուստի, հանրագրով ներկայացված՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման համար վաճառվող ապրանքը հսկիչ դրամարկղային մեքենաներով չգրանցած ֆիզիկական անձին պատասխանատվության ենթարկելու առաջարկը հակասում է ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգավորումներին: